կործանէր, և ազատել խեղճ մանկիկը։ Մինչդեռ սակայն կը դառնար ազնուագին աւանդոյս, հրացանի գնդակէ մը զարնուեցաւ։ Հազիւ ժամանակ ունեցաւ տղան ինձ տալու, ըսելով՝ թէ ով է, և հոգին տուաւ։

Հռիք. — *Ո՜հ, դժբա՜խդ պատանի։ Եթէ կարենայի վարձատրել այնքան հաւատարմութիւն։*

Գաբ. — *Մենք զհայրը կը վարձատրենք, հանելով այս արհաւիրքներէն դուրս։*

Հռիք. — *Այո՛, ուզածդ ըլլայ, Գաբրիէլ։*

ՏԵՍԻԼ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԹՈՄ, *չորս զինուորք, և վերինք։*

Գաբ. — *Ա՜հ, պապս, սիրելի պապս, կորսնցընելու ժամանակ չկայ։ Ես իմ հօրս քովն եմ. բայց պիտի կորսնցնեմ քիչ ատենէն, եթէ չազատես զինքը։ (Սոսկմամբ) Սոսկա՛... Գիտցի՛ր... որ այն բաժակին մէջ...*

Հռիք. — *Այո՛, Գաւիթ, այն բաժակին մէջ թոյն կայ, և ինձ կու տար...*

Դաւ. *(քստմամբ).* — *Ա՜հ, նենգող մարդասպաններ։ Սակաւօրեայ կեանք ունիմ. բայց պիտի չդատապարտէք զիս տեսնելու իմ գեր սիրելիներուս կոտորածը։ (Ցած ձայնով) Ես պիտի ազատեմ քեզմով իմ հին տիրոջս որդին։*

Թոմ. — *Ա՜հ մատնիչ, ա՜հ չարագործ (յառաջելով պահապաններով)։*

Գաբ. *(պատսպարելով զՀռիքարտ).* — *Ո՜հ Աստուած։ Իմ հայրս։*

Թոմ. — *Գէշ ժամանակ ըսիր։ Զինուորնե՛ր։*

Դաւ. *(դժուարաւ սուրը հանելով).* — *Վատասի՜րտ։ Ծեր եմ... բայց մինչև վերջին արիւնս զինքը պիտի պաշտպանեմ։*

Հռիք. *(Դաւթի սուրը առնելով).* — *Ինձ, ինձ այն երկաթն։ Պիտի մեռնիմ զէթ վրէժս առած։*

Թոմ. — *Վազէ՛ մէկը Կրեկորին իմաց տայ։*

Գաբ. *(յաջող յիշողութեան մը աղաղակով).* — *Ո՜հ Երկինք, դու կը թելադրես ինձ (կը յիշէ ատրճանակները, կը վազէ առոյին, կ'առնու մէկը և կը յարձկի Թոմի վրայ որ առանձնացեալ կը գտնուի, կը դնէ զայն կուրծքին)։ Չշարժի՛ս, ապա թէ ոչ կը սպաննեմ զքեզ։*

Հռիք. — *Ո՜հ զաւակս։*

Թոմ. — *Օգնութի՜ւն։*

ՏԵՍԻԼ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԿՐԵԿՈՐ *և վերինք։*

Կրեկ. — *Ո՛հ զայրոյթ, կատարուած չե՞ն իմ հրամաններս։ Ուրեմն ամենքէն մատնուա՞ծ եմ։ Եւ Հենրիկոս արդէն հորդան տուեր է ի Քլավէրհաւզ, և հոս կը դիմէ՝ յաղթական Բայմոնտի՝ իւր հետևողներով։*

Հռիք. — *(Ո՜հ ցնծութիւն)։*

Դաւ. — *(Ո՜հ հրճուանք)։*

Գաբ. — *(Ո՜հ բաղդ)։*

Կրեկ. — *Մի՛ ուրախանաք, ո՛վ նենգաւորներ, իմ կործանմանս վրայ, որ զձեզ ազատելու թշնամին հասնելէն առաջ, վրէժս առնելու ինձ միջոց չի պակսիր։ Հա՛պա զօրականներ։*

Գաբ. — *Ո՛չ ոք շարժի, ապա թէ ոչ կը սպաննեմ։*

Հռիք. — *Ո՜հ որդեակ իմ։*

Դաւ. — *Ա՜հ ահաւասիկ, ահաւասիկ յաղթականներն (մինչդեռ Կրեկորի զինուորները յարձկելու վրայ են Գաբրիէլի, Դաւթի և Հռիքարտոսի վրայ, Հենրիկոս կ'երևի կատղած իրեններովը վեհագոյն զօրութեամբ, ձեռքերնին զէներով։ Պատկեր ընդհանրական)։*

ՏԵՍԻԼ ՎԵՐՋԻՆ

ՀԵՆՐԻԿՈՍ, *Զինուորք,* ՅԱԿՈԲ, ԳԷՈՐԳ, ՍԱՄՈՒԷԼ, ՍԱՀԱԿ *և վերինք։*

Հեն. — *Զօրացի՛ր, բարեկամ. յաղթութիւնը մերն է։ (Առ Հռիքարտ) Բարեկամ, զքեզ ազատեցի։ Հիմա գո՛հ եմ։*

Ամենքը. — *Ո՜հ ուրախութիւն։*

Հեն. — *Հռիքարտոս, բարեկամներ, եկէ՛ք ամէնքնիդ իմ այս ծոցս։ Ուրախացի՛ր, բարեկամ, հուսկ ուրեմն քու արդար դատդ յաղթանակեց։*

Հռիք. — *Ա՜հ, ես այս բերկրապատար ցնծութեան առջև չեմ դիմանար։ Հոս նշանակուած էր իմ թշուառութեանցս վերջ մը։ Հա՛յր իմ, սիրելի որդեակ, ահ այո՛, շնորհակալ ըլլանք Երկնից, և աւարտենք գեղեցկագոյն բարեկամութեան մէջ մեր կենացը վերջին տարիները։*

Վերածեց Հ. Ա. ԳԱՍԳ.

ՎԵՐՋԻՆ ՀԱՐՈՒԱԾԸ

* *

Քաւլօ Պիանքէզզի տեղակալը անվեհեր շեշտով գոչեց իր զինուորներուն.

— Պատսպարուեցէ՛ք։

28 *հարիւրորդամեդր տրամագծի բացուածքով՝ ամբարձակ մարտկոցին՝ չորրորդ թնդանօթի ծառայող զօրականները՝ իսկոյն քաշուեցան ամրացիկի կողերուն՝ զրահապատ թաքստոցներուն մէջ։*

Թշնամիի զինէն արձակուած ահռելի ռումբը՝ մթնոլորտը սոսկալի շառաչիւնով, ահաբեկիչ գոռումով կը ցնցէր եղերական գալուստ մը գուժելով։

Պատսպարուեցէ՛ք հրամայող տեղակալը՝ իր թնդանօթին քով դիւցազնաբար կանգուն՝ վերջին րոպէին կրցաւ քաշել հրանօթին չուանիկը՝ ու կրակել նպատակին ամենաճիշդ ուղղութեամբը....։

Դժոխային կործանում մը իսկոյն տեղի ունեցաւ։ Ամրոցիկը, սանդը, զրահաւորումը, զինուորները և բոլոր շրջակայ իրերը՝ կարծես յանկարծական հրաբխային պոռթկումի մը զօրութենէն՝ կործանուած, ջախջախուած, խորտակուած էին։ Աւազալից պարկերու, փայտէ գերաններու, պողպատի սահմռկած կտորներու, երկաթէ գօտիներու, անջատուած և ջախջախուած մեքենական ագուցումներու խառնիխուռն կոյտ մը՝ մարտկոցին երբեմնի վայրը կը ցուցնէր։ Ճիշդ այդ վայրին կեդրոնը հասած՝ պայթած էր Աւստրիական ճակատէն արձակուած 305–*նոց ահեղամեծ ռումբը։*

Բայց սակայն քաջարի իտալացիք՝ այդ դժբաղդ հարուածը ընդունելով հանդերձ՝ դադրեցուցած չէին իրենց ռազմական գործունէութիւնը։ Ընդհակառակն, աւերածի այդ ողբալի վայրէն՝ աւելի եռանդեամբ հակազդեցութեան ձեռնարկած էին։

Միեւնոյն րոպէի մէջ, հետզհետէ երագաբար հազարաւոր ռումբեր՝ քսան հրանօթներու բերաններէն ժայթքեցին թշնամիի թաքուն բլուրներուն վրայ։ Արքունիք (la Corte) *կոչուող ամրոցը՝ որ յարձակողական գրութեան կեդրոնավայրը կը կազմէր, աւերակի վերածուեցաւ. բոլոր թնդանօթները հարուածուեցան և լռութեան դատապարտուեցան։ Իտալացւոց այդ արիւնռուշտ պատերազմի իրիկունը՝ պանծալի յաղթութեամբ մը պսակուեցաւ։*

* * *

Զօրապետը կը հրամայէր. — «Հողալից տոպրակները զգուշութեամբ մէկդի՛ քաշեցէք։ Թնդանօթի քով կուտակուած գերանները վերցուցէ՛ք։ Աւերակներու տակ ինկած քաջերը պատկառանքով դո՛ւրս բերէք»։

Նոյն զօրապետը՝ մարտկոցի չորրորդ հրանօթի իրեղէնները մէջտեղ հանելու համար՝ անձամբ ամէն աշխատութիւնները կը ղեկավարէր և զինուորաց վրայ կը հսկէր՝ որոնք մեծ խնամքով մեռեալ զինակիցներու գոյքերը կը հաւաքէին, իբր յիշատակ յղելու համար իւրաքանչիւրի ընտանիքին. իսկ ռազմականի վերաբերեալ իրերը՝ վերստին կրկին օգտակար ընելու դիտումով կը ժողվէին։

Թնդանօթաձիգ զինուոր մը յանկարծ աղաղակեց։

— Հո՛ս է, հո՛ս։ Տեղակալ Պիանքէդդիի մարմինը հո՛ս է։

Թշուառ սպային անշարժ պառկած էր, քարերէ, հողակոյտերէ, գերաններէ և այլ խորտակուած իրերէ ձևացած շեղջակոյտին տակը։

— Մեռա՞ծ է թէ ո՛չ, կը հարցնէին ամէնքը։

Զօրապետը, զօրականները՝ խանդաղատալի զգացումով փութացին առիւծաբար ինկածին շուրջը։

Հազարումէկ զգուշութիւններով յաջողեցան անոր մարմինը աւերակներու շեղջերէն դուրս հանել։

Արտաքսապէս՝ սպային վրայ ո՛չ մի ծանր վէրքի նշան չկար. Մի միայն ճակտին վրայ և քունքերու կողմը զանազան կապոյտ բիծեր կը տեսնուէին, որոնք սաստիկ ճզմուածքի արդիւնք էին։

Տեղակալը դեռ ողջ էր։

Ահռելի պայթումի պահուն՝ մարտկոցի բոլոր լաստակերտները յեղաշրջուելով՝ Պիանքէդդիի թնդանօթին քով տեսակ մը տաղաւար ձևացուցած էին՝ որուն ներքև բախտով պատսպարուած մնացած էր սպային մարմինը, մինչդեռ թշնամւոյն ռումբը իր չորս կողմը մահ սփռած և ամէն ինչ փճացուցած էր։

Քանի մը օր վերջը՝ երբ հազիւ Պիանքէդդի տեղակալը հիւանդանոցի մէջ քիչ մը սթափեցաւ, բարձին մօտէն՝ անուշիկ ձայն մը շշնչեց. «Փառք տուր Աստուծոյ՝ որ կեանքդ ազատած է»։

Եւ յիրաւի՝ կործանումի ահռելի վայրկենին, ինքը՝ որ ամենէն աւելի վտանգալից *կէտին վրայ կը գտնուէր՝ բախտի զուգադիպութեամբ՝ ինքը մի միայն ողջ մնացած էր՝ մահացուցիչ փլատակներու տակ։*

Բայց սակայն Պիանքէդղի տեղակալը, կարծես գանկին մէջ դատարկութիւն մը կը զգար. յիշողութիւնը կորուսած՝ հազիւ հազ միտքը կու գար վերջին օրուան պատահարը, և աչքերուն մէջ ալ ահաւոր կսկծանք կը զգար. լոյսէ կը խորշէր, ո՛ր և է զօրաւոր գոյնով առարկայ չէր կրնար տեսնել. մերթ տարօրինակ լոյսերու փայլատակումներ և մերթ թանձր խաւարային մթութիւններ իր ջղային դրութիւնը կը հարուածէին և զառանցողի յանկարծական ցնցումներով կը վրդովէին։

Արտաքսապէս՝ օրըստօրէ կարծես հանդարտելու և առողջանալու շրջանի մէջ մտած էր։ Սկսած էր առանց նեղութիւն զգալու՝ սպիտակազգեստ Գթութեան Քոյրը՝ միւս հիւանդապահ աղախիններէն զանազանել. կը համրէր մահիճներու շարքը, և նոյն իսկ սրահին ծայրը Տիրամօր խորանիկի վրայ զետեղուած սիրուն ծաղիկները կը տեսնէր։

Ո՛րքան երջանիկ կը զգար ինքզինքը երբ կ'ըմբռնէր թէ կեանքի քաղցրութիւնը իրեն վերստին ժպտիլ սկսած էր։ Ո՛րքան ուրախութիւն կը զգար՝ երբ կը լսէր թէ ինքը և իր զինուորները հայրենիքի պատուարը եղած էին. թէ իր մարտկոցին 28–նոց ռումբերը՝ հարուածներու ճշդութեամբը և քանդելու կարողութեամբ՝ ըսքանչելիք կը գտնուէին և իրեն արձակած վերջին հարուածը ամենէն աւելի զօրաւոր հակազդեցութիւն պատճառած էր՝ 305–նոցը արձակող ախոյեանին։

— Քո՛յր, պիտի կարենա՞մ քիչ ատենէն դառնալ պատերազմի դաշտը, իմ թընդանօթիս քովը, — կը հարցնէր տեղակալը՝ իրեն ծառայող բարի Մայրապետին, որուն ստէպ կը կրկնէր թէ. — «Ես ինքզինքս այլ ևս լաւ կը զգամ և շա՜տ լաւ....։ Եթէ, սա աչքերուս ներքին կսկիծը չըլլար, և սա տաղտկալի պղտորատեսութենէս ազատէի՝ ստուգիւ ինքզինքս բոլորովին առողջացած պիտի համարէի»։

— Սիրտդ հանդարտ պահէ Պր. Տեղակալ, ապագային մտածումով միտքդ մի՛ հոգնեցներ՝ որպէսզի շուտով կազդուրուիս, կը պատասխանէր կուսակրօնը, և բարեպաշտ զգացումով կը յաւելուր. Զարհուրելի փլատակներու տակ հրաշալի ոճով ողջ մնացած ըլլալդ յիշելով՝ Նախախնամութեան հազար փառք տո՛ւր, և համակամութեամբ ու երախտագիտութեամբ ասկէ յետոյ Աստուած ի՛նչ որ քեզի շնորհէ՝ գոհացի՛ր, և հոգեկան կատարելութեանդ ծառայեցո՛ւր։

— Ո՛հ, իրաւունք ունիս յարգելի Քոյր. այո՛ այո՛, պատերազմիս այն վերջին օրը կատարեալ դժոխքի կրակներու մէջ գտնուեցայ.....։ Սակայն, Քոյր, ըսէ՛ ի՞նչ կը նշմարեմ, ի՞նչ են այդ տեղի ճերմակ պատին վրայ տեսնուած սեւ սեւ երիզները, թուխ թուխ բիծերը։

— Ես բան չեմ տեսներ...։ Հա՜, անոնք... մութ ստուերներ են....։

— Ի՞նչ բանի ստուերներ։

. . . . ։

Գթութեան Քոյրը ճշմարտութեան հակառակ չխօսելու համար, աճապարեց, հեռացաւ թշուառ Պիանքէդղիի քովէն՝ ուրիշ հիւանդներու իրեն սպասելն պատճառելով։

Տեղակալը կռահեց որ Մայրապետին այդ ոճով հեռանալը՝ անբնական էր։ Նշմարած էր նաև որ անոր միշտ պայծառ և անուշ ու ժպտուն դիմագիծն, յանկարծական տխուր արտայայտութեամբ համակուած էր։

⁂

Առաւօտ մը՝ Պիանքէդղի տեղակալին սնարին մօտեցան զինուորական հրամանատար Բժիշկը և ուրիշ քաղաքացի մը։ Վերջինս Պոլոնիայի Համալսարանի բժշկապետն էր։ Յարգալից բարևներ փոխանակուեցան։

Գիտնական Ուսուցչապետը փափաքեցաւ հիւանդը զննել։ Եւ յիրաւի ամենայն խնամքով քննութիւն մը կատարեց։ Սա ալ ուրիշ բժիշկներու ոճով՝ Պիանքէզդիի աչքերուն խորքը դիտեց, ակնակոպիճները շօշափեց, ականջներու ետևը և քունքերուն դպաւ, և այլն. ապա հրամանատարին հետ, լատինական բառեր փոխանակեց ուսումնական ծածկալեզու բացատրութիւններով՝ որոնք հիւանդին հաճելի չեղան։

Ուժգին trauma (վիրականութիւն), ներքսակողմեան ematoma (արիւնահոսութիւն), ցանցատեսակի ճնշումն, ծանր խաժախտ (glaucoma)....։

Ո՛հ, գոնէ աւելի՜ բացայայտ խօսած ըլլային։ Գոնէ զինքը խնամողները որոշ ըսէին՝ իրենց մտահոգութեան պատճառը, և այդ օրհնած աչքերուն ախտաբանական վիճակը....։

Պիանքէզդի անորոշ խօսքերու հանդէպ սաստիկ կը սրտնեղէր և մտատանջութեան կը մատնուէր։

Հայելի մը ուզեց՝ սա վարպետ բացատրութեամբ։

— Քո՛յր, անշուշտ մօրուքս շա՜տ երկնցած պիտի ըլլայ. ո՞վ գիտէ ինչպիսի՜ հրէշային կերպարանք առած եմ. կ'ուզեմ մէյմը դէմքս տեսնել։

Հայելին ձեռք առնելով՝ ծնօտին շուրջը աճած և գալարուած անխնամ մազերը դիտելու տեղ՝ իսկոյն ուշադրութիւնը աչքի բիբերուն սևեռեց. կարծես անոնց խորքը նորութիւն մը կ'ուզէր տեսնել։

— Մի և նոյն բիբերս են, միևնոյն շագանակագոյն ծիածաններս , միևնոյն վառվռուն աչքերս են։ Ո՛չ մէջը և ո՛չ դուրսը բնաւ փոքրիկ կարմրութիւն մ'իսկ չեմ տեսներ, աչքերս չեն փոխուած, լաւ են. կ'ըսէր ինքն իրեն։

Բայց սակայն տեղակալը աչքերուն արտաքին լաւութեան վրայ սրտովն համոզուած չէր։ Կը զգար թէ անոնք առաջուան կենսունակութիւնը չունէին. ու թէև սուր կսկիծները կը նուազէին, բայց օր ըստ օրէ կ'աւելնային, սև ամպեր, մեծամեծ ստուերներ տեսնուելու երևոյթները՝ որոնք թանձր վարագոյրներու նման իր տեսութեան լոյսը յամառութեամբ կը խափանէին։

⁂

— Ազնիւ Քոյր, ի՞նչ կը նշանակէ glaucoma։

Մայրապետը՝ եղած հարցումէն յանկարծակիի գալով՝ անմիջապէս սա բացատրութիւնը տուաւ.

— Ակնակոպիճի խորքը պատահող ծանր հիւանդութիւն մ'է՝ որ հետզհետէ սաստկանալով՝ ենթական վերջնականապէս աչքին լոյսը կը կորսնցնէ։

— Վա՜յ իմ գլխուս, բացագանչեց աղէխարշ ձայնով, թշուառ տեղակալը։ Ո՛հ, հիմայ հասկցայ իմ դժբաղդ վիճակս ....։ Ուրեմն՝ պիտի խաւարի՜ ինծի համար արեգական լոյսը... ուրեմն՝ իմ սիրուն աչքերուս կեանքը՝ քիչ ատենէն պիտի շիջանի՜ ....։

— Ինչո՞ւ այդպէս յոռի կը մտածես, Պր. Տեղակալ , վրայ բերաւ՝ այլայլած Քոյրը։ Չես գիտեր որ ամէն հիւանդութեանց դարմանները կան, և թէ բարեպաշտ քրիստոնեան՝ միշտ յուսալու է։

— Քո՛յր, ընդունայն տեղ զիս համոզել մի՛ աշխատիր. այլ ես չեմ խաբուիր. գլխուս պատահելիքը բոլոր ծանրութեամբ ըմբռնած եմ....

Պիանքէզդիի այտերէն՝ առաջին անգամ ըլլալով դառնութեան արտասուքը նշմարող՝ Քոյրը կը ժխտէր թէ, իր վիճակը բոլորովին յուսահատական չէր։ Իսկ զօրականը կ'երերցնէր գլուխը և կը հարցնէր։

— Պիտի կուրնա՞մ, պիտի կուրնա՞մ իմ լոյս աչքերս։

⁂

Շաբաթներէ ի վեր՝ այլ ևս իր սևեռեալ մտածութիւնը այդ էր. և այդ զինքը կը մաշեցնէր։ Արդեօք ստուգիւ բոլորովին աչքերուն լոյսը պիտի մարէ՞ր։

Եւ սակայն չէր համարձակեր սոյն հարցումը այլոց ուղղելու։ Կ'ըմբռնէր թէ ճշմարտութիւնը իրմէն պիտի ծածկէին։ Կը տենջար, ո՜հ սաստիկ կը տենջար ստոյգը գիտնալ։

Բժիշկները կ'ապսպրէին բացարձակապէս հանգիստ կենալ անկողնոյն մէջ, գլուխը անշարժ պահել, չկարդալ, աչքերը չհոգնեցնել, սեւեռեալ մտածութիւն չունենալ։

Եւ սակայն տեղակալը կ'ուզէր փարատել մտքին այդ դժնդակ տարակոյսը։

Յոյս և կասկած՝ հետզհետէ կը սպառէին Պիանքէղզիի ուժերը և նպատակին չէր հասներ։

Առաւօտ մը՝ օգնական բժիշկը՝ հիւանդին այցելութենէ վերջը, գրասեղանին վրայ կը մոռնայ իր նօթագրութեան թուղթը։ Պիանքէղզի կ'իջնէ անկողնէն, կ'առնու զայն։ Իր հիւանդութեան վերաբերող տեղեկագիրն էր։ Կը կարդայ․

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ։ — *«Տեղակալ Բաւլօ Պիանքէղզի, Երրորդ ամրոցային թնդանօթաձիգ»։*

ԱԽՏԱՑՈՅՑ։ — *«Ծանր վիրականութեամբ աչքերուն ցանցատեսակի անջատում»։*

Ապա, ի՛նչ ոճով սոյն հիւանդութեան ենթակայ ըլլալուն պատմութիւնը գրուած էր, մարտի ատեն՝ դիւցազնական վերջին արարքն գովաբանելով։

Ուսումնասիրող ընթերակայ բժիշկը հոն նշանակած էր նաև իր օրական դիտողութիւնները։

Վիրաբուժական գործողութիւն և գիտելիք՝ գլխակարգին տակ գրած էր․

— «Տեսութեան կարողութիւնը անընդհատ գէշնալու հետ է։ Ք... Համալսարանի Մասնագէտ բժշկապետն ալ հաստատեց որ ակնակոպիճի վիրաբուժական գործողութիւն կատարելը՝ անօգուտ պիտի ըլլայ»։

«Բժշկապետ Ա. Ա. աչարոյժը հաստատեց՝ որ հիւանդը ճակատագրուած է՝ աչքին լոյսը իսպառ կորսնցնելու»։

Թշուառը՝ այս բոլորը զարհուրանքով կարդալէ վերջը, սրտին աննկարագրելի տխրութեամբ և յուսահատ թախծութեամբ՝ ինկաւ անկողին։

Երեսնամեայ առոյգ հասակի մէջ կորսնցնե՛լ տեսանելիքը։ Այր կատարեալ տարիքի մէջ – յորում մերձաւոր ապագան իրեն համար՝ նոր փայլ, նոր բաղդ, նոր կեանք կը խոստանար, – զրկուիլ կեանքի վայելքը և վայելչութիւնը իր մէջ ամփոփող՝ շողշողուն գոհա՛ր աչքերէն....։

Ո՛հ, ի՛նչպէս սարսափահար կ'ըլլար խեղճ Պիանքէղզին, ինքը որ դէպ ի ռազմադաշտ անվեհեր մեկնելու միջոց նոյն իսկ բովանդակ անձը, բովանդակ կեանքը Հայրենիքի փառաց խորանին ողջակէզ մատուցած էր։ Նա այն ատեն ինքզինքը երջանիկ կը համարէր մտածելով որ իր կեանքի գնովը՝ Նուիրական Հայրենիքի սիրուն զաւակներուն և բոլոր ընտանիքներուն ազատութեան և պաշտպանութեան ախոյեան պիտի կանգնէր։

Ճշմարիտ հաւատացեալ մ'ըլլալով՝ Աստուծոյ մեծ շնորհքը կը նկատէր՝ սոսկալի կործանման մատնուած մարտկոցավայրէն ողջ դուրս հանուիլը, մինչդեռ իր զինակիցներէն ո՛չ ոք ազատած էր։

Բայց սակայն, այժմ բոլորովին կուրնալու դատապարտուած ըլլալը մտաբերելով՝ յուսահատօրէն կը հեծկլտար։

— «Երանի՛ թէ ես ալ մեռած ըլլայի» — կ'աղաղակէր ռազմադաշտի դիւցազնը՝ և փոքր տղու մը պէս՝ դառն կ'արտասուէր։

⁂

Գթութեան քոյրը սրահէն ներս մտնելուն՝ տեղակալ Պիանքէղզիի, անկողնէ դուրս, ոտքի կանգնած ըլլալը տեսնելով, նեղսիրտ շեշտով մը գոչեց․

— Ի՞նչ կ'ընէք պարոն․ չէ՞ք գիտեր որ ձեզ արգիլուած է չելլել, անկողնէն չշարժիլ։

Զինուորականը տխուր ժպիտով պատասխանեց․

— Պարտէզ կ'ուզեմ ելլել։ Արեւու ճառագայթները ո՛րքան չքնաղ կը լուսաւորեն այսօր....։ Ո՛հ կ'ուզեմ, կ'ուզե՛մ դեռ տեսնել, դեռ վայելել....։

— Սակայն առանց բժշկի բացայայտ հրամանին կարելի չէ՛։

— Պէ՛տք չկայ հրամանի.... այլ ևս բժշկապետը ինծի չի նեղանար....։ Գրուա՛ծ է... հո՛ն, թուղթին վրայ գրուած է իմ դատապարտութիւնս....։

Կրօնաւորուհին՝ կսկիծէն քար կտրեցաւ։

Եւ Քառլօ Պիանքէդդի Տեղակալը ելաւ պարտէզ։

Փայլուն աչքերուն դիմաց, ստէպ ստէպ կարծես սև շղարշներ կը քաշուէին։ Սակայն դեռ կրնար տեսնել գեղեցկերանգ ծաղիկներ՝ որոնց հետ կարծես կը խօսէր, կարծես հրաժեշտի ողջոյն կու տար։

Ցառաջեց դէպ ի պարտէզի դուռը. դիտեց պողոտան, և կարծես երթևեկող բազմութենէն վշտահար՝ ներս քաշուեցաւ։

Մօտեցաւ հիւանդանոցի մուտքին աջ և ձախը ծածանող դրօշներուն։ Համբուրեց Կարմիր խաչը, մարգրիտ արտասուքներ հոն դրոշմելով։ Գուրգուրանքով ու դողդոջուն մօտեցաւ, գրկեց Ազգային Եռագոյնը, համբուրեց ու համբուրեց....։

Երերոտ քայլերը ուղղեց դէպ ի Եկեղեցեակը. համակամութեան անուշ՝ միանգամայն երկիւղած ժպիտով՝ խորանին առջև ծունկի եկաւ և խոնարհեցուց ափերուն մէջ առած գլուխը։ Աղօթե՛ց, երկար ատեն աղօթե՛ց։

Ու երբ դարձաւ անկողին, դրացիները զինքը հանդարտ և անդորրացած տեսան։

Պատրաստ էր վերջին հարուածը ընդունելու։

*
* *

Սեպտեմբերի պայծառ առաւօտ մ'էր՝ երբ տեղակալ Պիանքէդդի շուրջը աղմուկներ լսելով՝ և զգալով որ գթութեան Քոյրը դէպ ի իրեն կու գայ, ըսաւ.

— Քո՛յր, այսօր ո՛րքան լուսնալը կ'ուշանայ։

— . . . .։

Հասկցաւ թէ լուսամուտները բաց էին, և զով քամին իր այտերը կը փայփայէր։

Եւ սակայն այլ ևս արևու ճառագայթները իր աչքերուն ցանցատեսակին վրայ չէին ներգործեր։

Խաժախտը զինքը բոլորովին կուրցուցած էր։

Արտասուքի գողտր մարգարիտներ այն մարած բիբերէն դուրս ծորեցան։

Պիանքէդդի թաշկինակով իսկոյն սրբեց զանոնք, և միշտ քրիստոնէաբար ապրած քաջարի զօրականը մրմնջեց.

— Տէ՛ր իմ և Աստուած, օրհնեա՛լ ըլլայ Քու կամքդ։ Աշխարհիս Լոյսը խաւարեցաւ ինձ համար, յաւիտենական երանաւէտ Լոյսիդ զիս արժանի ըրէ՛։

Թրգմ. Հ. Ն.

ԲՈՅՍԵՐՈՒ ԱՆԳԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բոյսերն ալ անգթութիւն կ'ընե՞ն. — Կը հարցնէ Leonard Bastin, Նիւ-Եօրքի Scientific American թերթին մէջ։

Եթէ անգթութիւնը՝ չարիք գործելու կամք ունենալէ առաջ կու գայ, այն ատեն պէտք է նախ և առաջ ապացուցանել որ՝ բոյսերը իրենց գործառնութեանց վրայ գիտակցութիւն ունին։ Իսկ եթէ անգթութիւնը պէտք է արգասիքներէ դատուիլ, այն ատեն պէտք է խոստովանիլ որ բոյսերը բաւական մեծ անգթութիւններ կը գործեն։

Զանազան տեսակ բոյսեր կան՝ որոնք միջատներ կ'որսան և անոնցմով կը սնանին։ Սոյն միջատորսակ բոյսերը իրենց թակարդին մէջ քաշած զոհերը դժնդակ մահուան կը դատապարտեն։ — Զանազան օրինակներ.

Քալիֆորնիական Darlingtonia բոյսը՝ խողովակաձև երկայն որոգայթներուն ներքին կողերէն մեղրանիւթ կը ծորեցնէ՝ ճանճեր ներս քաշելու համար։ Ճանճը կամ որ և է փոքր միջատը, դիւրաւ ներս կը մտնէ բայց բնաւ դուրս չելներ։ Թակարդին գագաթը գտնուած զանազան կէտերը